# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 21-ի N 144 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 14-ի N3-Ա,N4-Ա, N5-Ն, N6-Ա և N7-Ա որոշումների վերաբերյալ.

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա է հետևյալ թերությունները.

1. N4-Ա որոշման նախաբանում հղումը ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշմանը կրկնվում է և սխալ է գրառված։
2. N5-Ն որոշումը նորմատիվ բնույթ չի կրում, ուստի հերթական համարից հետո «Ն» տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա, բացի այդ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի հղումը ավելորդ է։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մ. Նիկոյան
1 հունիսի 2023թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ 4-Ա որոշման վերաբերյալ**

ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն որպես ընդլայնում տրամադրվող հողամասերի մակերեսների հանրագումարը չի կարող գերազանցել ընդլայնվող հողամասի՝ մինչև առաջին անգամ ընդլայնվելը պետական գրանցում ստացած հողամասի մակերեսին, ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ 4-Ա որոշման մեջ նշված չէ ընդլայնվող հողամասի մակերեսը այդ, իսկ պատճառով հնարավոր չէ եզրակացություն կազմել ուղղակի վաճառքի միջոցով օտարվող հողամասի իրավաչափության վերաբերյալ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԲԱԺԻՆ- ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ
ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ

Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ

23.02.2023թ.

Կատարող՝ Ա. Մինասյան